3080

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 02 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ № 0029-23

***Ձեռնարկողը՝*** ***Կարեն Դավթյան***
*ք. Երևան, Սևանի փողոց 86/2*

***Գործունեությունը՝*** ***Ծաղկաձոր համայնքի Ծաղկունյանց հրապարակ 5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*Կոտայքի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0029-23

«28» 02 2023թ.

# *Ծաղկաձորի Ծաղկունյանց հրապարակ թիվ 5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | Քաղաքացի Կարեն Դավթյան |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեությունը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք |

***Ներածական մաս***. Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից լուծումներով, բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7)-րդ ենթակետի, «ա» ենթակտի 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 16000 ք.մ, ուստի սույն նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Աշխատանքային նախագիծը մշակվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման №26042022-07-0002 վկայականի, 2022թ. հուլիսի 13-ին տրված №29 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և պատվիրատուների կողմից տրված առաջադրանքի հիման վրա:

Բնակելի համալիրի աշխատանքային նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փատաթղեթերի պահանաջներին համապատասխան:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ համաձայն 2022թ. հուլիսի 13-ին տրված №29 ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ օբյեկտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր (նոր կառուցվող), բնակավայրերի հասարակական կառուցապատումից բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակության փոփոխմամաբ, գրանցված իրավունքի տեսակը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի՝ ընդհանուր բաժնային սեփականություն:

***Նկարագրական*** Նախատեսվող հողատարածքը գտնվում է Ծաղկաձոր համայնքի գլխավոր

հրապարակից հարավ ընկած հատվածում և կլինի 9 մասնաշենքերից բաղկացած ներքին բակով կառույց:

Տարածքը գտնվում է Ծաղկաձոր քաղաքի հարավային-կենտրոնական հատվածում, գոյություն ունեցող «Ալփինա» հյուրանոցային համալիրի անմիջապես հարևանությամբ՝ դեպի հյուսիս, «Ծաղկունյաց» հրապարակ 5 հասցեում և իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք: Տարածքում առկա է քանդման ենթակա մասնաշենք 1– 666,04 ք.մ, մասնաշենք 2– 699,11 ք.մ, բեսեդկա– 16 ք.մ, բեսեդկա– 16 ք.մ, սանհանգույց– 12,5 ք.մ, կիսակառույց ճաշարան– 405,4 ք.մ, լվացքատուն– 293,2 ք.մ, կինոխցիկ– 53,6 ք.մ, պարիսպ – 50ք.մ:

Հողամասի ռելիեֆային առանձնահատկությունից ելնելով՝ մասնաշենքերը նախագծված են տերասաձև և կունենան տարբեր հարկայնություններ, երկու ստորգետնյա հարկ, որոնք նախատեսված են թվով 465 մեքենա կայանելու համար:

Համալիրի վերգետնյա հարկերի առաջին, երկրորդ և մասնակի վերջին հարկերը նախատեսված կլինեն հասարակական /սրճարաններ, խանութներ, կինոթատրոն, ռեստորան, լողավազան, մարզասրահ, սպա և այլն / տարածքների համար:

Համալիրի երորրդ հարկից սկսված նախատեսվում են բնակելի հարկեր որոնցում կտեղակայվեն թվով 690 բնակարաններ, բնակելի հարկերի բարձրությունը 3.30մ է, առաջին և երկրորդ հարկերինը 3.90մ.:

Համաձայն ՀՀՇՆ IV -11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է երկակի նշանակության ավտոկայանատեղ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են ծառայել որպես պարզագույն թաքստոց 240 մարդու համար, նշված հարկերում նախատեսված են սանհանգույցներ բնակչության բոլոր խմբերի համար, ինչպես նաև օդափոխության համակարգ, կրակմարիչներ և վթարային լուսավորություն:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ՝

Տարածքի ընդհանուր մակերեսը – 16000 ք.մ,

Կառուցապատման մակերես - 6037 ք.մ-38 %;

Ճանապարհ, մայթ և այլ -3304– ք.մ- 20 %;

Կանաչապատման մակերես – 6659 ք.մ- 42 %;

Բնակարանների քանակը 690 հատ,

Ավտոկայանատեղերի քանակը՝ ստորգետնյա 465 հատ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռների Թեղենիս լեռան արևելյան եզրամասային թեք լանջին՝ հարավից- հյուսիս անկումով, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1856-1884 մետրերի սահմաններում:

Բուն հետազոտվող տեղամասում գրունտային ջրերն հիմնականում ունեն ընդհանուր տարածում: Մինչև 30 մետր փորված հորատանցքերով գրունտային ջրերի հորիզոնը հատվել է 1,6-14,2 մետր խորություններում, համաձայն ունեցած ֆոնդային նյութերի տվյալների գրունտային ջրերի առավելագույն բարձրացումը կարելի է ընդունել մինչև 0,5-1,0 մետր բարձր ֆիքսված մակարդակից:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցների վրա՝ բացակայում են:

Բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չկան:

Նախատեսվող գործունեությունը գտնվում է բավականին մեծ հեռավորության վրա բնության հուշարձաններից և որևէ ազդեցություն չի կարող տեղի ունենալ հուշարձանների վրա շինարարության ընթացքում:

Բնության հատուկ պահպանվող տարածքները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից զգալի հեռավորության վրա և չեն կարող ենթարկվել նրա ազդեցությանը:

Նախագծվող բնակելի-հասարակական համալիրի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախատեսված է օդափոխության բնական- մեխանիկական համակցված և ամբողջությամբ մեխանիկական դրդմամբ համակարգեր: Բնական-մեխանիկական համակցված համակարգը նախատեսվում է բնակելի հարկերում իսկ մեխանիկականը՝ հասարակականում և ավտոկայանատեղիներում:

Ջեռուցման և հովացման համակարգը նախատեսվում է «Չիլլեր-Կաթսա-Ֆանկոյլ» երկխողովականի համակարգ, որն իրենից ենթադրում է որպես ջերմարտադրող սարք ունենալ կաթսա(ներ), իսկ որպես ցրտարտադրող սարք չիլլեր:

Ավտոկայանատեղիներում դրական +5 ջերմաստիճանի ապահովման համար նախատեսված են ջերմային թնդանոթներ:

Ջերմության խնայողության համար կընտրվեն ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք կապահովեն ջերմության բարձր խնայողություն:

Համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, ջրամատակարարումը կիրականացվի օրվա կարգավորիչ ջրամբարի հարակից տարածքից, ջրահեռացումը՝ Մկրտչյան փողոցով անցնող կոյուղատարից:

Հեղեղատար համակարգի խողովակները նախատեսվում է անցկացնել ընդհանուր օգտագործման միջանցքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ավտոկայանատեղիում նախատեսվող տրանսֆորմատորային ենթակայանից՝ երկու առանձին գծերի միջոցով:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով:

Նախատեսվող գործունեության կիրականացվի նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում, ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 96000խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր, հանվող 78000խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա 180 խմ ծավալով հողի բերրի շերտը, որը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Տարածքում նախատեսվում է տնկել.

Ձիակասկ - 15 հատ

Թույա սյունաձև-22 հատ

Ասպիրակ - 33 հատ

Ֆորզիցիա – 10 հատ
Իլենի – 16 հատ
Գիհի կազախական – 8 հատ
Եղևնի հիասքանչ – 10 հատ:
Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է կամ մոտակայքով անցնող ոռոգման ցանցից կամ բերովի ջրով: Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:

**Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են՝
- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,
- վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝
- կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 18,2 տոննա/շին.ժամ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 420խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, որը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը /ծածկագիրը՝ 5410020702033/ կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին, հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը ունի թեքություն հարթակի որոշակի հատված որտեղ էլ կկուտակվի յուղը, որտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

**Շրջակա միջավայրի վրա թվարկված աշխատանքներից առաջացող հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, մեղմելու նպատակով նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ.**

1. Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականցում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորման իրականացում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում՝ մասնավորապես ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- նորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը:

1. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները այնպեսի հաշվարկվում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի և անվադողերի լվացումից առաջացող հոսքերի ուղորդում պարզարան, որը տեղադրված կլինի շինարարական հրապարակին կից և իրենից կներկայացնի պլաստմասե 25խմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

2. Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովվում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկականն միջոցների ներգրավվում,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած շինարարկան թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում, շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների անվադողերի լվացում բարձր ճնշման ջրով, պարզված ջրի օգտագործում ջրցանի համար, նստվածքի հեռացում որպես շինաղբ:

Տարածքում առկա հողի բերրի շերտը կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքերի ընթացքում, հողաբուսական շերտի անցած հզորությունը 0,9-1,5 մետր է:

Տարածքում առկա հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, նախատեսված են հետևյալ միջոցառումները՝ հողի բերրի շերտը հանում և պահպանեում ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը, հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտի անմիջապես դարսում լայնակույտերով, եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա ողողումը և հողմատարումը կանխելու համար նախատեսվում է լայնակույտերի մակերևույթի ու թեքությունների ամրացվում խոտացանքով կամ այլ եղանակներով, լայնակույտերը տեղադրվում տարածքում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա թվարկված հնարավոր բացասական ազդեցություններից բացի հնարավոր են նաև արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, աշխատողների վնասվածքներ, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն, որոնց հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք միջոցառումները՝ մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողների, այդ թվում նաև վարորդների, հրահանգավորման անցկացում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, հակահրդեհային անվտանգության միջոցառումների

ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհների և անցումների միշտ ազատ լինելու ապահովում, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակների տեղադրում, հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, բոլոր աշխատողներին անհատական պաշտպանության միջոցներով ապահովում և մի շարք այլ միջոցառումներ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործման ապահովում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի դրանց աղմուկի մակարդակին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց՝ տեխնիկական նորմալ վիճակում շահագործում և այլն:

Բնակելի համալիրի աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները, որի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար: Այդ մշտադիտարկումները հետևյալն են.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության կողմից հետևողականություն՝ տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 2480000 դրամ:

***Պարճառաբանական մաս.*** Օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Արտակարգ իրավիճակների, Առողջապահության, Կրթության, իտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Կոտայքի

մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

## Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
4. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել և իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանները:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:

Շինարարության ընթացքում և աշխատանքների ավարտից հետո, որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- ապահովել և իրականացնել ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,

- Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,
- Շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն՝ հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի,
- ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածի բնակալիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով, ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության բարձր աճն ապահովելու համար, կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինել նորերով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Կարեն Դավթյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկունյանց հրապարակ թիվ 5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան